ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

28.10.2019
343-47

ՀՀ հատուկ քննչական ծառայության
պետ պարոն Սասուն Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Փաստինֆո» լրատվական գործակալության լրագրող Իզաբել Սահակյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Վերջինս նշել է, որ 2019 թվականի հոկտեմբերի 17-ին տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն, և չնայած 2019 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՔԾ լրատվական ծառայությունից ստացել է պատասխան գրություն, սակայն տրամադրված տեղեկությունները ամբողջական և լիարժեք չեն:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով, խնդրում ենք տրամադրել «Սելենա» ՍՊԸ-ին պատկանող «Յանս» ռեստորանային համալիրում հայտնաբերված հարկային չարաշահումների դեպքի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները:

1. ՀՔԾ-ում քննության ընթացքում հիմնավորվե՞լ են արդյոք պետությանն ավելի քան 1.3 մլրդ դրամի վնաս պատճառելու նախնական տվյալները, թե՞ ոչ: Եթե այո, ապա քրեական գործով մեղադրանք առաջադրվե՞լ է, թե՞ ոչ: Եթե այո, ապա քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածով և քանի՞ հոգու:
2. Քրեական գործով Վաչե Ղազարյանին, նրա կնոջը՝ Ռ. Բեգլարյանին առաջադրվե՞լ է արդյոք մեղադրանք, և եթե այո, ապա ո՞ր հոդվածով և ի՞նչ խափանման միջոց է ընտրվել:
3. Քրեական գործով պատճառված վնասը վերականգնվե՞լ է, թե՞ ոչ: Եթե այո, ապա ի՞նչ ծավալով և ո՞ւմ կողմից:
4. Ի՞նչ փուլում է գտնվում նախաքննությունը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան